

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԲԱՍՅԵ՛ ք. ԿՄՊԱՆ, ՇԱՐՈՒՅԱՆ 20/22
ՔԵՆՆԱԽՈՒՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ԳԻՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՏՈՒԿԱՆ
«ՍՅՈՒՆՅԱՏ ԱՇԽԱՏՐՈՒՄ» ԱԲՏՈՒՄԵՆ
ՊԱՏԱՆԱՏԱՑՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ
000231: Թերթը տպագրվում է
«Տիգրան Մեծ» հրատարակչության
տպարանում:
Դասցեն՝ ք. Երևան,

Արշակունյաց 2: Ծավալը՝
1 տպագրական մանուկ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝
100 դրամ: Ստորագրված է
տպագրության 29.08.2014թ.:

ՇԱՔԱԹ
30 ՕԳՈՍՏՈՍԻ
2014թ.
№ 20 (328)

**Ես գիր սվի ձեզ, որ
լույս ունենաք ձեր
սանն ու հոգում:
Բայց կմարի լույսը,
էրէ դուք մոռանաք
սուր բռնելու զործը:
Սուրն ու գիրը՝ ձեզ
դաշտյան, հիշեցե՛ք:**

ՍԵՄՐՈՊ ՍԱՇՏՅՑ
(ըստ Սերո Խանգաղյանի)

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Քաջարան,
21 օգոստոսի
2014թ.

Տոնախմբությունը սկսվեց Կերին
Յանդի Սուրբ Աստվածածին եկեղեցուց՝
Քաջարանին քաղաքի կարգավիճակ
շնորհելու 56-ամյակին նվիրված պատարագով:

Տոնակատարությունը շարունակվեց
Արցախյան ազատամարտում զոհված
ազատամարտիկների հիշատակին
նվիրված հուշահամալիրում, որ
կառուցվել է 1993-1994թթ.: Հիշեցնենք,
որ իր կյանքը հայրենիքի զոհատեղանին
է դրել 40 քաջարանցի: «ԶՊՄԿ» ՓԲԸ
նորանշանակ ղեկավարությունը՝
Նիլ Ստիվենսոնը, վարչական տնօրեն
Վահե Յակոբյանը, գլխավոր տնօրենի
առաջին տեղակալներ Նարեկ Ամբարյան
ու Աշոտ Մարգարյանը, Քաջարանի
քաղաքապետ Վարդան Գեորգյանը,
ՀՀ զինված ուժերի 1-ին և 4-րդ բանակային
կորպուսի հրամանատարները և
հյուրերը հարգանքի տուրք մատուցեցին
զոհված ազատամարտիկների հիշատակին:
Քաջարանի հոգեւոր հովիվ տեր
Շիրակ Խանոյանը հոգեհանգստի
պատարագ մատուցեց:

Ավանդական ծաղկեղույնից հետո
տոնակատարության ջահը տեղափոխվեց
Քաջարանի N1 և N2 միջնակարգ դպրոցներ,
որտեղ կազմակերպվել էր բակային
ճամբարների փակման արարողությունը:
Երեխաները կատարեցին Քաջարանի
հիմնը, ներկայացրին գեղեցիկ երաժշտական
համարներ՝ իրենց ուրախ ձայնը լսելի դարձնելով
ողջ քաղաքում: Ճամբարականների
ուրախ տրամադրությունն ու անհոգ
ժպիտները վկայում էին, որ Քաջարանում
հավատում են իրենց վաղվա օրվան:

Նախքան տոնակատարության հետագա
ընթացքը ներկայացնելը մի փոքր
անդրադառնանք այս տարվա բակային
ճամբարների կազմակերպման նախապատմությանը:

Արդեն երեք տարի է՝ Քաջարանում
ամառային արձակուրդի ընթացքում
կազմակերպվում է բակային ճամբար
քաղաքապետարանի նախաձեռնությամբ
և ԶՊՄԿ-ի ֆինանսավորմամբ: Տարեցտարի
ավելանում է ճամբար այցելող երեխաների
քիվը: Այս տարի հուլիսի 14-ին սկսվեց
առաջին հերթափոխը N1 և N2 բակային
ճամբարներում: N1 բակային ճամբարը,
որ ուներ «Ուրախ գնացք» անվանումը
(Քաջարանի N1 միջնակարգ դպրոց),
առաջին հերթափոխին ընդգրկեց 132
ճամբարական, երկրորդ հերթափոխին՝
165, երրորդին՝ 173: Զոհատվածները
նշանակվել են հիմնականում երիտասարդներ՝
նպատակ ունենալով նրանց աջօրյան
ևս հետաքրքիր դարձնել: Ճամբարում
ընդգրկվել էին 2001-2008թթ. ծնված
երեխաներ ինչպես Քաջարանից, այնպես
էլ Կապանից, Երևանից: Այս տարի
ՇԱՐՈՒՅԱՆ ԵՎ ԳՐԱՏՈՒԿԱՆ

Հանքագործների քաղաքը՝ պարուրված տոնական տրամադրությամբ

1958 թ. օգոստոսի 21-ին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Քաջարան քաղաքատիպ ավանը դասվեց ՀՍՍՌ շրջանային ենթակայության քաղաքների շարքը:

Օգոստոսի 21-ին Հայաստանի Հանրապետության հարավային դարպասներից մեկը՝ Քաջարան քաղաքը, տոնեց իր հերթական տարեդարձը՝ Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 56-ամյակը: Քաջարանցիների համար արդեն ավանդույթ դարձած այդ օրն ինչ-որ առումով նաև համայն հայության տոնն է դարձել: Ստեղծվելով ու զարգանալով Չանգեզուրի պղնձամուղիենային կոմբինատի կայացմանն ու առաջընթացին համընթաց՝ Քաջարանը դարձավ այն եզակի համայնքներից մեկը, որն այսօր հպարտանում է նախեսառաջ իր բնակիչների զբաղվածության ապահովմամբ: Քաջարանցիների է, ինչու չէ, սյունեցիների համառ ու նվիրական աշխատանքի շնորհիվ ձեռնարկությունն իր արժանապատիվ դիրքը գրավեց համաշխարհային էլեմենտարային արդյունաբերության մեջ: Այսօր գրեթե անհնարին է պատկերացնել քաղաքն առանց ձեռնարկության եւ ձեռնարկությունն առանց քաղաքի: Եվ դրանում եւս մեկ անգամ համոզվեցինք քաղաքի օրվա տոնակատարության ողջ ընթացքում:

Քաջարան քաղաքի հիմնը

**Խոսքը եւ երաժշտությունը
ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

*Լեռների լանջին թիկնած քարե հրաշք,
Ուտերից ամպերի ձերուակ շղարշ,
Քեզ են վատահված հալոց գանձերն անգին,
Որ պահես ու տաս սերունդներին:
Ողջ աշխարհն է հիմա քեզ ծանաչում,
Չանգեզուրի դողանջի հետ անունդ է ամենուր հնչում,
Դու հենոց ի վեր հայտնի միշտ քաջերի ավան,
Որ դարձել ես չքնաղ մի Քաջարան:*

*Քեզ համար թող արեւը միշտ ժպտա անմար,
Երկնքում աստղերը թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:
Թող մեզ հետ հավիտյան քայլի բարին,
Մեր համառ աշխատանքով մենք կհաղթենք չարին,
Եվ թող Չորր ու Գանձասար՝ այս անունները հին,
Մեծ փառքի ձանձիա հարթեն հերոս քո որդիներին:*

*Քեզ համար թող արեւը միշտ ժպտա անմար,
Երկնքում աստղերը թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:*



Քաջարան քաղաքի զինանշանը

Քաջարան քաղաքի օրվան նվիրված տոնական միջոցառումներն
իրականացվեցին «Չանգեզուրի պղնձամուղիբլեյնային կոմբինատ»
ՓԲ ընկերության հովանավորությամբ:

Քաջարան ֆաղափի օրը



Հիշատակի արարողություն Արցախյան ազադամարտում Նահատակված քաջարանցիներին նվիրված հուշահամալիրում

Հանքագործների քաղաքը՝ պարուրված տոնական տրամադրությամբ

ՍԿԻՉԸԸ ԷՋ 1

վա առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ճամբար էին հաճախում երեխաներ, ովքեր առաջին անգամ պիտի դպրոց հաճախեն: Նշենք, որ յուրաքանչյուր հերթափոխ տեսում էր ինը օր, հինգ օր ընդմիջում էր տրվում՝ հաջորդ հերթափոխը կազմակերպելու համար:

N1 բակային ճամբարի ավագ ջոկատավար Արմեն Հակոբյանի խոսքերով. «Ճամբարին երեխաները մասնակցում էին մեծագույն սիրով ու պատասխանատվությամբ: Աշխատում էինք նրանց համար ապահովել հագեցած ու հետաքրքիր առօրյա՝ առաջնորդվելով հստակ կանոնակարգով՝ նախաձեռնությամբ, ազատ ժամ, տողան-հաշվառում, ջոկատային պարապմունքներ, լող, մարզական միջոցառումներ, ուրախ ժամանց եւ, իհարկե, էքսկուրսիաներ դեպի Քաջարանի տարածաշրջանի տեսարժան վայրեր: Միայն մի խնդիր ունենեմք, այն, որ ջոկատային պարապմունքները կազմակերպվում էին դպրոցի դասասենյակներում եւ ասֆալտի վրա, որ այս տարվա շոգ ամառվա պայմաններում շատ դժվար էր անցկացնել: Խորհրդային տարիների ճամբարը կարոտով ենք հիշում. պետք է լինի առանձին, քաղաքից դուրս մանկապատանեկան համալիր, որտեղ երեխան կկարողանա ինքնուրույն ծրագրել իր օրը»:

N2 բակային ճամբարը՝ «Երազանքի թռիչքներ» (Քաջարանի N2 միջնակարգ դպրոց), առաջին հերթափոխին հավաքել էր 125 երեխա, երկրորդ հերթափոխին՝ 140, երրորդին՝ 146: Ինչպես առաջին բակային ճամբարում, այնպես էլ այստեղ ընդգրկվել էին նույն տարիքային խմբի երեխաները: Առօրյան այստեղ նույնպես



Ձախից՝ «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տնօրենի պաշտոնակատար, գլխավոր տնօրեն Նիկ Ստիվենսոնը, գլխավոր տնօրենի առաջին տնօրենի պաշտոնակատար Աշոտ Մարգարյանը, վարչական տնօրեն Վահե Հակոբյանն Արցախյան ազադամարտում Նահատակված քաջարանցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրում

անցնում էր խիստ կանոնակարգով, միայն այն տարբերությամբ, որ այս տարի կազմակերպել էին ներկայացումներ, կինոդիտումներ, հայտարարել հունորի օր, անցկացրել երգի մրցույթ, սովորեցրել պար բեմադրել եւ այլն: Ավագ ջոկատավար Լարիսա Ստեփանյանը, շնորհավորելով քաջարանցիներին, մասնավորապես նշեց. «Պատահական չէ, որ մեր քաղաքը կոչվում է Քաջարան, այսինքն՝ քաջերի անրոց: Ուզում են, որ մեր քաղաքում բոլորը երջանիկ ու անհող ապրեն, մշտապես լինեն տեղական ինքնակառավարման

մարմինների եւ ԶՊՄ-ի ուշադրության կենտրոնում: Միաժամանակ ցանկանում են, որ ճամբարը կազմակերպվի բնության գրկում, փառք Աստծո, հրաշալի բնություն ունենք»:
Նշենք, որ ճամբարականներն այցելել են «Ջանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Նիկ Ստիվենսոնին՝ իրենց անկեղծ շնորհակալությունը հայտնելու ճամբարի գործունեությունը ֆինանսավորելու եւ իրենց աջակցելու համար:
Այնուհետեւ տոնի մասնակիցները շարժվեցին դեպի հրապարակ՝

Նյութեր՝ տնակական օրվա առթիվ



ԱՐՄ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության
վարչապետ



Սիրելի՛ քաջարանցիներ, այսօր մենք ունենք անկախ երկիր, որ օրեցօր զարգանում ու առաջընթաց է ապրում: Ե՛րբ չէ՛ք այդ ճանապարհին մենք դեռ շատ խնդիրներ ունենք լուծելու, բայց տեսնելով Քաջարանում տիրող բարձր ու ոգեւորող տրամադրությունը՝ մենք եւս համակվում ենք ուրախությամբ: Այս յուրօրինակ տրամադրությունը, հիրավի, ամբողջացնում է Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը, որի համբավը տարածվել է Հայաստանի սահմաններից դուրս: Օրեցօր բարգավաճող հանքարդյունաբերական հսկան Հայաստանի նորագույն պատմության մեջ նոր էջ է բացել եւ հաստատուն բայլերով առաջ է շարժվում:

Քաջարանն անմասն չմնաց Արցախյան ազատամարտում եւ իր ներդրումն ունեցավ մեր պետականության վերականգնման ու ամրապնդման գործում:

Ես սրտանց շնորհավորում եմ բոլորին եւ մաղթում կամք, արիություն եւ ազգամպաստ գործունեություն:

Ծնունդդ շնորհավոր, Քաջարան...

ՏԻԳՐԱՆ
ԾԱՐՎԱՆՅԱՆ

ՀՀ զինված ուժերի
1-ին բանակային
գորամիավորման
հրամանատար, գնդապետ



Քաջարանցիներին շնորհավորում եմ քաղաքի 56-ամյակի կապակցությամբ: Նշեմ, որ սա ոչ միայն Քաջարան քաղաքի տոնն է, այլև

Նյութը՝ տոնակա օրվա անթիվ

ամբողջ Սիսական երկրի տոնը, որովհետև յուրաքանչյուր քաղաք, յուրաքանչյուր օրրան եթե ունի օր, տարեդարձ, ուրեմն այնտեղ կյանք կա, որն իր բնականոն հունի մեջ է: Եթե կա տոնակատարություն, եթե մարդիկ ուրախ են, եւ ժողովուրդը հուզվում է ուրախությունից (ինչպես տեսնում են), ուրեմն քաղաքը կենսունակ է եւ հաստատուն առաջընթացի մեջ:

Մաղթում են Քաջարան քաղաքին էլ ավելի առաջընթաց, քաջարանցիներին՝ ուրախ եւ երկար տարիների կյանք, որպեսզի կարողանան ապահովել քաղաքի երթը՝ գալիքին միտված, որպեսզի մեր երկրին պիտանի սերունդ դաստիարակեն:

Թող բարեկեցությունը, բեղմնավոր աշխատանքը բեւաժեն այստեղ՝ հանուն մեր երկրի հետագա զարգացման ու բարեկեցիկ ապագայի:

ԱՆՆՈՒՄԻ ԿՍԱԿՈՐՅԱԼ

ՀՀ զինված ուժերի 4-րդ բանակային զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր



Գտնվելով մեր հանրապետության հարգարժան եւ սիրելի քաղաքներից մեկում՝ Քաջարանում, որտեղ ոչ միայն մարդկային կյանքն է եռում, այլեւ աշխատանքը, մենք նույնպես համակվում ենք տոնակա տրամադրությամբ: Քաջարանն արդյունաբերական այնպիսի կենտրոն է, որ կարողանում է ոչ միայն իր առաջընթացն ապահովել, այլեւ աջակցել հանրապետության այլ համայնքների:

ՀՀ զինված ուժերի 4-րդ բանակային զորամիավորման զինվորները մասնակցում են քաղաքի 56-ամյակի տոնակատարությանը, եւ ուրախ են, որ կհանում ենք մեր ժողովրդի տոնակա հաճելի տրամադրությունը: Պետք է հպարտանալ, որ բազում հարցերում մեր սիրելի քաղաքը կանգնած է հայոց ազգային բանակի թիկունքում:

Մաղթում են քաջարանցիներին կորով, արիություն, խաղաղություն, որ կարողանան ստեղծագործ աշխատանքով զարգացնել իրենց բնօրրանը:

Շնորհիվ զինվորական շքերթը: Քաղաքի կենտրոնական փողոցի ողջ երկայնքով փռվել էին սեղաններ՝ ավանդական եւ ժամանակակից ձեւավորմամբ: Ազգային ուսուցիչների բույր տարածվել էր շրջակայքում, եւ մարդիկ, մոտենալով սեղաններին, ճաշակում էին դրանք ու բաժակ բարձրացնելով՝ միմյանց շնորհավորում տոնի կապակցությամբ:

Այնուհետեւ ՀՀ զինված ուժերի 4-րդ բանակային զորամիավորման զինվորները շքերթով, որին ակտիվորեն մասնակցեցին նաեւ ճամբարի սաները, իջան հրապարակ: Մասնակիցները նաեւ ծանոթացան որոշ զինատեսակների, որ հետաքրքրական էր հատկապես երեխաների համար: Շքերթի կարեւորությունն այն էր, որ, ինչպես նշեց քաղաքապետը, Քաջարանի լեռնագործի քայլերի ծայրին միացավ նաեւ զինվորի հատու քայլը, որ հիշեցնի աշխարհին իր կայուն ու անուր լինելու մասին, երկարացնի կոմբինատի աշխատանքի ընթացքը:

«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ մարզահամալիրում քաջարանցիներին սպասվում էր մայրաքաղաքից ժամանած երգիչ-երգչուհիների մասնակցությամբ անմասնադատ համերգ:

Մինչ տոնակա համերգը ելույթով հանդես եկան Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը, Քաջարանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը: Միջոցառմանը ներկա էին նաեւ ԼՂՀ վարչապետ Արա Յարությանյանը, Քաջարանի կոմբինատի ղեկավարները: Վարդան Գեւորգյանը շնորհավորական խոսքում մասնավորապես նշեց. «Իմ անկեղծ շնորհավորանքն են հղում քաջարանցիներին, բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Քաջարան քաղաքի կայացման ու բարգավաճման գործում: Շնորհավորում են քաջարանցու զարկերակին՝ ՁՊՄԿ-ին, որ միշտ կենդանի է պահում քաջարանցու ոգին: Այսօր քաջարանցու համար հիշողություն են դարձել սոցիալական խնդիրները, նա աշխարհին ներկայանում է տարածաշրջանի բարեկեցիկ ու հարգանքի արժանի կենցաղով: Միտելի՛ք քաջարանցիներ, ուզում են, որ մենք լինենք արժանապատիվ հետնորդները մեր պապերի ու ստեղծագործ հայ ժողովրդի»:

Փոխմարզպետ Վաչե Գրիգորյանը ներկայացրեց Սյունիքի մարզպետ Վահե Յակոբյանի շնորհավորական ուղերձը, իսկ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Յակոբյանի օրհնության խոսքը քաջարանցիներին մատուցեց Քաջարանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը: Տեր Մակար վարդապետ Յակոբյանի խոսքում մասնավորապես ասվում էր. «Այսօր տոն է Սյունյաց աշխարհում, որ իր մեջ ներառել է մեր ողջ աշխարհը, այն Սյունյաց աշխարհում, որ իր իսկ սկզբնավորման օրվանից մշտապես անցել է խանդավառ, երկար ճանապարհ, ունեցել փորձառու անձինք, ովքեր կերտել են այս իրականությունը, որով ուրախանում ենք ոչ միայն մենք, այլեւ մեր կողքին կանգնած հյուրերը: Մենք



Զինվորական փողային նվագախումբը փոնական Քաջարանում



«Ձանգեզուրի պոնձամուլիբեռնային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր փոխտն Նիկ Ստրիվենսոնը, ԼՂՀ վարչապետ Արա Յարությանյան (աջից 2-դը) եւ «Քրոնիմետ» ընկերության ներկայացուցիչները

միասնաբար, ուս ուսի տված կերտել ենք այս օրը եւ այսօրվա ուրախալի օրը եկել ենք աստվածային, երկնային օրհնությունները խնդրելու Բարձրյալից: Թող այս ժողովուրդը ծնի, սնի այնպիսի զավակներ, ովքեր կարող են ապահովել վաղվա օրը, այն առատ ու խաղաղ վիճակը, որով պիտի այս ժողովուրդը ստեղծագործի եւ այս ստեղծագործությամբ նորանոր ծնունդներ ունենա:

Սեզանում արդեն ավանդույթ է դարձել տոնակատարությունների ժամանակ հատկապես զերատեսչական մեղալների հանձնումը: Այդ օրն էլ անմասն չմնաց ավանդույթից, եւ Քաջարան քաղաքի օրվա կապակցությամբ 1992-94թթ. Արցախյան պատերազմի մասնակիցներից 25 հոգի պարգևատրվեց Քաջարանի քաղաքապետարանի «Արցախյան ազատամարտ» ու կենցաղով: Մինչ այդ քաղաքի 56-ամյակի եւ «ՁՊՄԿ» ՓԲԸ-ի 63-ամյակի կապակցությամբ անցկացվել էր պատահանների

եւ երիտասարդների ֆուտբոլի բակային առաջնություն, որի արդյունքները նույնպես անփոփոխեցին: Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, փոխքաղաքապետ Կարեն Թադևոսյանը եւ «ՁՊՄԿ» ՓԲԸ վարչական տնօրեն Վահե Յակոբյանը մրցանակային տեղեր գրաված թիմերին հանձնեցին մեդալներ, դրամական պարգևներ, հուշանվերներ: Քաղաքապետարանի փոխանցիկ զավաթը հանձնվեց առաջին տեղ գրաված «Լեռնագործ» թիմին:

Տոնակա բարձր տրամադրությամբ ամբողջ քաղաքը մասնակցեց համերգին, որին հաջորդեց հրավառությունը: Երկնակամարում թեւածող լույսերը եւս մեկ անգամ հիշեցրին աշխարհին, որ այստեղ՝ Սյունյաց բարձրավանդակի գողտրիկ անկյունում, իր կայուն առաջընթացն է ապրում Քաջարան քաղաքը՝ ստեղծելով հզոր ներուժ հայոց պետության համար:

ԱՐՄԻՆԵ ԶՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

Տոնն ավարտվեց հաճելի համերգով

Քաջարանցիներին շնորհավորելու էին եկել հայ երգարվեստի նշանավոր ներկայացուցիչներ ու ճանաչված համույթներ՝ Դավիթ Ամալյան, Արամո, Էմմա Պետրոսյան, Եվա Ռիվաս, Արսեն Գրիգորյան (Արսո), Տիգրան Պետրոսյան, Լեյլա Սարիբեկյան, Սոֆի Դանիելյան, Անաիդա Յամբարձունովա, Արսեն Գրիգորյան (Արո), Սկրտիչ Մկրտչյան (Մակիչ), ՊՆ «Ձորական» համույթ, «Սասնա ծռեր» ազգային պարի համույթ: Համերգը վարում էին Լուսինե Բաղալյանը եւ Դավիթ Թադևոսյանը:



Եվա Ռիվաս



Քաջարան ֆաղափ օր



Եւ Աստուած ասեց Լոյս լինի. Եւ Լոյս եղաւ...

Պատարագ Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ նվիրված Քաջարան քաղաքի օրվան

Պատարագի՝ տեր Շիրակ քահանա Խանոյան՝ Քաջարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ (լուսանկարում):
Տեր Շիրակ քահանա Խանոյանն ահա ինչպես իմաստավորեց օրը եւ օրհնության ինչ խոսք հղեց քաջարանցիներին:
Քաջարան քաղաքի ծննդյան 56-ամյակը միասնաբար ենք նշում եւ ուրախ տրամադրությամբ: Սա մի իրողություն է, որ ընդմիջտ կգրանցվի ներկայիս բնակչության հիշողության մեջ: Ուրախակի ու գովելի փաստ է այն, որ մարդիկ կարողացան տասնամյակների ընթացքում իրենց հավաքականությամբ կերտել մի

քաղաք, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում եւ, ինչու չէ, աշխարհում իր ուրույն դերն ու նշանակությունն ունի:
Շնորհավոր լինի քո տոնը, Քաջարան քաղաք, լինես առաջատար ոչ միայն աշխատանքի մեջ, այլեւ հոգևոր, բարոյական, ազգային բարձր նկարագրով լինես առաջինը ողջ հայության մեջ ու հայ ժողովրդի պատմության եւ համայն մարդկության համար որպես օրինակ ծառայես: Մաղթում եմ, որ Քաջարան քաղաքը՝ իր գեղեցիկ բնությամբ, իր դարավոր սովորույթներով հանդերձ, ավելի գեղեցիկ լինի ներքնապես, այսինքն՝ մարդկային փոխհարաբերության, շփման եւ հոգևոր բարձր արժեքների պահպանման առումով: Թող Աստված օրհնի, զորացնի բոլոր քաջարանցիներին, իրենց սրտի անկյունում թաքցնված ամեն մի փափագ ի կատար ածի, եւ մեր ժողովրդին էլ կկոչեմ, որ դառնա իր արմատներին, իր պապերի հավատքին՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրհնությունն էլ ավելի վայելելու, սերնդեսերունդ աստվածային օրհնությունն իր մեջ պահելու, փոխանցելու համար, ոչ թե տուրք տալու սնտոհապաշտություններին, կախարդություններին ու դիվական խռովություններին, գուշակություններին:



Դրվագ բակային ճամբարների փակման արարողությունից

Տոնախմբության մասնակիցների խոսքեր



ՎԱՐԵՆ ՄՎՐՏՅԱՆ

«ԶՊՄԿ» ՓԲԸ շինարարության գծով փնտրենի տեղակալ

Քաղաքի ծննդյան օրն ի տարբերություն տոնական մյուս օրերի զանգվածային բնույթ է կրում, որովհետեւ յուրաքանչյուրիս հոգուց բխող ուրախությունն արտացոլող տոն է: Սա վաստակած տոն է, քանզի Քաջարանը հիմնվել է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի շնորհիվ: Երբ ամեն տարի նշում ենք այս տոնը, ապա Քաջարանը դրանից ոչ թե ծերանում է, այլ երիտասարդանում՝ նախենառաջ իր ապրելակերպով, իր գործունեությամբ, իր ունեցած դիրքով: Կոմբինատի վաստակաշատ կուլտիվը հպարտություն է ապրում, որ կարողանում է ապահովել մեր տնտեսական, ֆինանսական խնդիրների լուծումը: Կոմբինատի նորանշանակ ղեկավարությունը ճիշտ է սկսել իր գործունեությունը, ուրախակի է, որ նոր ղեկավարները փորձառու կադրերին տեղ են տալիս: Իսկ հասարակական կարծիքի հանդեպ ունեցած մեծ ուշադրությունը վկայում է, որ նրանք հաջողությունների գրավականը տեսնում են հանրության հետ սերտ հանագործակցության մեջ:

քաղաքի կարգավիճակ է ստացել Քաջարանը, եւ այդ օրը տոնախմբությանը հիշելը, կարծեք, ավանդույթ է դարձել: Բոլորս հպարտանում եւ ուրախանում ենք, որ գոնե տարվա 365 օրերից մեկ օրը հնարավորություն ունենք կատարված աշխատանքն արժեւորել եւ ամփոփել:



ՆՅՈՍ ՍՄՐԱՅԱՆ

Քաջարանի N1 միջն. դպրոցի դասվար

Տոն է բոլորիս հոգիներում: Տոնական տրամադրության մի կարեւոր մասնիկն էլ երեխաներն են, ովքեր ամեն ջանք գործադրում են իրենց քաղաքի տոնն ավելի գեղեցկացնելու համար: Քաջարանցիներ իր ողջ գոյության ընթացքում աշխատել է, արարել եւ քաղաք կառուցել, որն այսօր ունի 56 տարվա պատմություն: Ցանկանում եմ, որ տարիներով ստեղծված լավագույն ավանդույթները, մարդկային բարձր նկարագիրը հաստատուն պահվեն: Թող Քաջարանը ծաղկի, հանրահայտ դառնա ամբողջ աշխարհում, աջակցի բոլորին: Թող Քաջարանի պղծամուլիթերենային կոմբինատի ներուժն այնքան ընդլայնվի, որ մեր հայ ժողովուրդը, բոլորս միասին ապրենք բարեկեցիկ ու ապահով:



ՍՏԵՍԱՆՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քաջարանի պարավոր քաղաքացի, աշխատանքի վերերան

Իմ 90 տարվա կյանքն անց են կացրել Քաջարան քաղաքում եւ ուրախ եմ, որ քաղաքը հասել է այսպիսի հաջողության: Քաղաքի եւ Քաջարանի պղծամուլիթերենային կոմբինատի ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում մեր ժողովրդի ապրելակերպին: Փառք Աստծո, լավ ղեկավարներ ունենք այսօր: Շնորհակալ եմ, որ նրանք զնահատում են մեր ժողովրդի աշխատանքը, ոգևորում եւ ուրախացնում մարդկանց: Քաջարանցիներին մաղթում եմ երկար տարիների առողջ կյանք: Թող մեր քաղաքի բնակիչների կենցաղն ավելի բարելավվի, որ կարողանան երեխաներին հասցնել իրենց նպատակին, որ սերունդների ստեղծածը բազմապատկեն:



ՈՍԿԱՅԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քաջարանի N 2 միջն. դպրոցի փնտրենի պաշտոնակատար

Հայաստանի մի շարք քաղաքներից Քաջարանը տարբերվում է աշխատանք ունենալով: Աստծո կամոք այստեղ մարդիկ աշխատանք ունեն: Քաջարանը, որ հիմնադրվել է շրջակայքի վեց գյուղի հիման վրա, շատ արագ իր ծաղկումն ապրեց, աստիճանաբար բարգավաճեց՝ դառնալով հանրապետության արդյունաբերական կենտրոն: 1990-ական թվականների սկզբին՝ խավարի տարիներին, քաղաքը մթնեց, որովհետեւ նրա զավակները հաղթանակ էին կերտում ռազմի դաշտում: Աշխատանքը դադարեցվեց, բայց հետո արագ վերականգնվեց՝ ստանալով լայն թափ: 56-ամյակն էլ խիստ պայմանական է. ՀՍՄՌ ղեկավարության որոշմամբ 1958թ. օգոստոսի 21-ի այս օրը



Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵՆ ԱՆԵՅԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐ ԵՎ ՀՐԱՏԱՐՎԻԿ «ԱՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախտվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Շահի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայական՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ:
Տպարանակը՝ 2000, օգինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 29.08.2014թ.: